

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՎՐԻՊՈՒՄՆԵՐ՝

Լ. Կ. ԵԶԵԿՅԱՆ

Գեղարվեստական թարգմանության կարևորագույն խնդիրներից մեկը ամենից առաջ բնագրին հարազատ մնալու միտումն է, որ հաճախ հաջողվում է այս կամ այն թարգմանչին, և, բնականաբար, թարգմանությունը շահում է, շահում է նաև բնագիրը, և անշուշտ՝ նաև ընթերցողը:

Բայց երբեմն հարազատ մնալու այդ ձգտումը խիստ բառացի է ընկալվում ու ներկայացվում, և թարգմանությունը դառնում է մի տեսակ լուսանկարչական պատճենում, որի հետևանքով բնագրի առանձին լեզվական միջոցներ, քերականական ձևեր, և նույնիսկ՝ ամբողջական հատվածներ ներկայացվում են թարգմանող լեզվով բառացի ճշգրտությամբ, որը ինչ-որ տեղ հեռանում է բնագրից և վերջ ի վերջո հանգեցնում այսպես կոչված «անճշգրիտ ճշգրտության» (Կ. Չուկովսկու արտահայտությամբ՝ «Неточная точность»): Թարգմանության տեսության ճանաչված ներկայացուցիչներից մեկը՝ գրող Կ. Չուկովսկին, այս առիթով նշում է. «Այս կամ այն շափածո ստեղծագործության ճշգրիտ, բառացի պատճենահանումը ամենաանճշգրիտն ու ամենակեղծն է բոլոր թարգմանությունների մեջ»¹:

Գեղարվեստական մի շարք թարգմանություններում բնագրի լեզվով արտահայտված մտքերը հաճախ մեխանիկորեն փոխանցվում են մեկ այլ լեզվի, առանց հաշվի առնելու երկու տարբեր լեզուների քերականական կառուցվածքը, լեզվական առանձնահատկությունները և հատկապես՝ յուրաքանչյուր ժողովրդի ազգային մտածողությունը:

Թարգմանությունը բնագրի հետ համեմատելիս անհրաժեշտ է ոչ թե բառը բառի կամ տողը տողի հետ համեմատել, այլ ամբողջությամբ բանաստեղծությունը բանաստեղծության հետ: Միայն այս դեպքում հնարավոր կլինի պարզել, թե հասն¹ է արդյոք թարգմանիչը իր գեղարվեստական ներպատկազարմանը, թե պարզապես տեղի է տվել այսպես կոչված «ստրկական» (այսինքն՝ խիստ բառացի) թարգմանության:

Լեզուների համադրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր լեզու, բացի մյուս լեզուների հետ ունեցած օրինաչափ ընդհանրություններից (առավելապես միևնույն լեզվաընտանիքին պատկանող լեզուների), ունի նաև միայն իրեն հատուկ լեզվական միջոցներ, քերականական ձևեր ու արտահայտություններ, որոնց առկայությունն ու գործառական առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն հենց գեղարվեստական թարգմանության գործընթացում: Լեզվական այս միավորները նախ և առաջ պայմանավորված են տվյալ լեզվով հաղորդակցվող հանրությանը յուրահա-

¹ К. Чуковский. Высокое искусство. М., 1968, с. 58.

տուկ մտածողութեամբ և նրա անմիջական արտահայտութիւնն են:

Ուստի միշտ չէ, որ որևէ լեզվով արտահայտված միտքը հնարավոր է փոխանցել կամ արտահայտել թարգմանող լեզվի նույն կամ միանման լեզվական միջոցներով ու քերականական կարգերով, բառերով ու դարձվածքներով: Նման դեպքերում անհրաժեշտ է գտնել կամ ընտրել բնագրի համապատասխան ձևերին համարժեքներ կամ լավագույն դեպքում դրանց համապատասխան փոխարինող միավորներ, որոնք սովորաբար թարգմանութեան տեսութեան մեջ անվանվում են «համարժեք փոխարինիչներ», այլապես կստացվի արհեստական, շինծու մի թարգմանութիւն, որը ոչ միայն չի ներկայացնի տվյալ բնագիրը, այլև որոշակիորեն կհեռանա ինչպես բովանդակութիւնից, այնպես և նրա արտահայտման ձևից՝ լեզվից:

Լեզվական այս տարբերութիւններն ակնհայտ են նաև ուսուցիչներին և հայերին լեզուների քերականական համակարգերում: Բացի քերականական առածին կարգերի ակնբախ տարբերութիւններից (բայի կերպի, գոյականի սեռի, շնչավորի և անշունչի և այլն), կան նաև լեզվական այլ տարբերութիւններ՝ նախադասութեան կառուցվածքի, շարահասութեան ու խնդրառութեան բառերի ու դարձվածքների բազմիմաստութեան և այլն, որոնք երբեմն անտեսվում են առանձին թարգմանութիւններում և բացասաբար անդրադառնում թարգմանութեան ընդհանուր որակի վրա: Նշենք նմանօրինակ թարգմանութիւններից մեկը:

Ռուս ժամանակակից գրող Դանիլ Գրանինի «Նկարը» վեպի հայերեն թարգմանութեան մեջ (թարգմանիչ՝ Վահե Երկանյան), ինչ խոսք, կան հաջողված թարգմանութեան բազմաթիվ հատվածներ ու լավագույն օրինակներ: Խոսքը դրանց մասին չէ: Մենք ուզում ենք նշել անհաջող թարգմանութեան մի քանի դեպքեր, որոնք, մեր կարծիքով, բնագրին խիստ հարազատ մնալու ճշգրիտ թարգմանելու միտումով են պայմանավորված և որոնք, դժբախտաբար, բնորոշ չեն մեր լեզվի քերականական կառուցվածքին ու լեզվական օրինաչափութիւններին և հատկապես՝ հայերենի լեզվամտածողութեան ընդհանրապես:

Վերջնենք բնագրի հետևյալ նախադասութիւնը. «Лосев на это заметил военкому: — Не послушалась Тучкова, ты же говорил, чтобы сама читала».

Թարգմանվել է այսպես. «Դրա վրա Լոսեր նկատեց զինկոմիւն.

— Տուչկովան չլսեց, չէ՞ որ դու ասացիր, թե նա կարդա» (էջ 47):

Նախ ուշադրութիւն դարձնենք «заметил» բայի թարգմանութեան վրա այն «նկատել» ձևով թարգմանելը բառացի է և տեղին չէ, քանի որ այստեղ բայը միայն «ասել»-ու իմաստ ունի, այդ պատճառով էլ թարգմանութիւնն անհարթ է, և նախադասութիւնը երկիմաստութիւն է արտահայտում: Իսկ ինչ վերաբերում է նախադասութեան առաջին մասի («на это») «դրա վրա»-ով թարգմանելուն, ապա դա ոչ միայն խիստ բառացի է ու անտեղի, այլև տվյալ դեպքում բոլորովին այլ իմաստ է արտահայտում, չէ՞ որ մենք ունենք դրան համապատասխան «այդ առթիվ» կամ «այդ առիթով» արտահայտութիւնները, որոնցից որևէ մեկի գործածութիւնը տվյալ դեպքում տեղին էր և ճիշտ:

Նշված նախադասութեան մեջ ճիշտ չենք համարում նաև «чтобы» շարժական «թե»-ով թարգմանելը, քանի որ այն այստեղ ունի նպատակի իմաստ և ճիշտ կլիներ թարգմանել «որ» («որպեսզի»-ի նշանակութեամբ) շարժականով:

Ավելորդ համարելով մանրամասն վերլուծութիւնները՝ նշենք մի շարք

նախադասութիւններ՝ համապատասխան թարգմանութիւններով՝ ընդգծելով անհաջող կամ սխալ ընտրված բառերն ու արտահայտութիւնները:

«Связи земляческие он всячески поддерживал, что во многих смыслах было полезно такому городу, как Лыков, достаточно известному и тем не менее сидящему на районном бюджете».

Թարգմանված է. «Նա ամեն կերպ պահպանում էր հայրենակցական կապերը, ուր շատ կողմերով շահավետ էր այնպիսի քաղաքին, ինչպիսին բավականին հանրածանոթ և այնուամենայնիվ շրջանային բյուջեի վրա նրանք տալիս էր» (էջ 7):

Ակներև է, որ ընդգծված վերջին արտահայտութիւնը խորթ է հայերենի լեզվամտածողութեանը և միայն ու միայն բառացի թարգմանութեան արդյունք է: Այս նախադասութեան մեջ անտեսվել է նաև բարդ ստորադասական նախադասութեան մեջ հարաբերականի և հարաբերչալի թվային համաձայնութեան պահանջը (կապերը... ուր, փոխանակ հոգնակի թվով՝ որոնք): Կամ մեկ այլ դեպքում՝ ինչպե՞ս կարող է որևէ մեկը «հայհոյել ակորդեոնը» և «ծիծաղել ինչ-որ անհայտ մեկին»:

Ահա այդ նախադասութիւնները.

«Կուրոչնիկովը, որը երաժշտութեան մեջ միայն բայանն էր ընդունում, իսկ ակորդեոնն աղբն հայհոյում էր՝ «Արևմուտքի հոգեպիղծ ազդեցութիւն է» (26): Բնագրում. «Курочников, который из всей музыки признавал баян, на аккордеон уже бранился—«растленное влияние Запада».

«... նա սթափված հայացքով շփեց լոսերին... և սկսեց ծիծաղել ոչ թե նրան, այլ ինչ-որ անհայտ մեկին» (32):

Եվ ապա՝ «ուրեմն բանն ամբողջութամբ փաստարկների մեջ է: Իսկ ես կարծում եմ ցանկութեան, պետք է կտրուկ դնել, վերև գնալ, չվախենալ: Իսկ մեկ այլ տեղում վեպի հերոսներից մեկն ասում է.

Մենք մեր տգիտութեամբ այսպես որոշեցինք» (54):

Գուցե ընդգծված բառի փոխարեն թարգմանվեր «չիմացութեամբ» կամ «անտեղյակութեամբ», այսպես դժվար թե որևէ մեկը ինքն իրեն տգետ համարի, հատկապես, երբ բնագրում գործ է ածվում «по свсѣй темноте» արտահայտութիւնը:

Հաջող չէ նաև թարգմանութեան հենց առաջին նախադասութիւնը. «Անձրևը լոսերին վրա հասավ Կուզնեցկի մոտտում»: Նախ՝ այս արտահայտութեան (բաղադրյալ հատուկ անուն է) երկրորդ բաղադրիչը կարելի էր թարգմանել, և ապա՝ հայերենում «կամուրջ» («մոտ») գոյականի ներգոյականը «ում» վերջավորութեամբ գործածական չէ: Ուրեմն՝ անձրևը վրա հասավ ոչ թե Կուզնեցկի մոտտում (կամուրջում), այլ՝ կամուրջի վրա: Կամ՝ մեկին հանդիպեցի ոչ թե կամուրջում, այլ՝ կամուրջի վրա:

Զգալի թիվ են կազմում առանձին բառերի ու արտահայտութիւնների անհաջող, արհեստական թարգմանութիւնները, որոնք հիմնականում մեխանիկական, զուտ բառային-բառարանային թարգմանութեան հետևանք են, և դրանց գերակշռող մասը հայերենում գործածական չէ, ինչպես՝ պահեստարան, նախազորակոչիկ, ցանցազծավոր կուրտկա, անկանխիկ հաշիվ, մտային հայացք, գերանների տրցակ, հնամյա խանում կին, լվացարանակոնքեր և այլն:

Զարմանք է հարուցում նմանօրինակ արտահայտութիւնների գործածութիւնը հետևյալ դեպքերում:

«Այնքան տարիներ են անցել, ամբողջ փողոցն է փոխվել, և տունն էլ գրիմավորվել է» (68): Ինչպե՞ս կարող է տունը գրիմավորվել, երբ այն նշա-

նակում է դիմահարդարել: «Պրիմ անել, դերասանին այս կամ այն կերպաբանքը տալ, նաև՝ շպարելով դեմքը այլանդակել»:

«Պոլիվանովը կիսագրկել էր լոսևին»: Ահա մի յուրօրինակ «նորակազմություն» ևս.

«Քաղժողկրթաթանի վարիչը համաձայնողաբար ծիծաղեց, և լոսևը նույնպես ծպտաց...» (57): «Заведующий гороно согласно засмеялся, и Лосев тоже улынулся».

Կամ՝ ծղոտե նստոցներ և կանաչ մահուդով պատած ամբիոնասեղան, նույնիսկ՝ «շնորհալի պատանի, դեպի պատմությունը հակված, դուրքյամբ՝ բանվոր» (73): Քարգամանության մեջ երբեմն անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում քերականական որոշ ձևերի ճիշտ և տեղին գործածության վրա: Կան դեպքեր, երբ այդ ձևերի թարգմանության ժամանակ նույնպես կիրառվում է «ճշգրտության» սկզբունքը, դրանով իսկ նախադասությունների մեջ ստեղծում անհարթություններ, նույնիսկ՝ մտքի աղճատում:

Հայտնի է, որ ռուսերենի դերբայական ձևերը հայերենում կարող են թարգմանվել ինչպես համապատասխան դերբայներով (նաև՝ անորոշ դերբայի հոլովական ձևերով), այնպես և երկրորդական նախադասությունների կառուցյով՝ ելնելով տվյալ արտահայտության իմաստից: Երբեմն այս թարգմանության մեջ անտեսվում է նշված իրողությունը, և դերբայական որոշ ձևեր (հատկապես ժամանակի իմաստ արտահայտող) գերազանցապես թարգմանվում են դերբայի գործիական հոլովով և ոչ երկրորդական նախադասությամբ, որը տվյալ դեպքում ավելի ճիշտ է ու արտահայտիչ:

Բերենք մի քանի օրինակներ:

«Была такая традиция — приезжая в Москву, Лосев навещал земляков».

«Այդպիսի տրադիցիա կար՝ գալով Մոսկվա, լոսևը այցելում էր հայրենակիցներին» (71): «И к вечеру, придя к себе в номер, попивая чай из большого фаянсового чайника, Лосев испытывал полнейшее умиротворение».

«... և իրիկնադեմին, գալով իր համարն ու մեծ հախճապակյա թեյնիկից թեյ խմելով, լոսևը լիակատար խաղաղությամբ, ինքնաբավարարվածության զգացում ապրեց»:

Պետք է նշել, որ ռուսերենի ընդգծված դերբայական ձևերը հայերենում անորոշ դերբայի գործիական հոլովով են թարգմանվում հիմնականում այն դեպքերում, երբ դրանք գործողության կատարման ձևն են ցույց տալիս, իսկ ժամանակային հարաբերություն արտահայտելիս, կարծում ենք, որ նույնպատակահարմար է և սահուն դրանք թարգմանել երկրորդական նախադասությամբ՝ «երբ» բառով, ինչպես ասենք՝ երբ գալիս էր Մոսկվա, լոսևն այցելում էր իր հայրենակիցներին:

Երբեմն, ինչպես արդեն ասվել է, նշված ձևերի ոչ ճիշտ թարգմանությամբ խճողվում է նախադասության միտքը, ինչպես՝

«Նախկինում նա կենսաբանության ուսուցիչ էր եղել և գտնում էր, որ կենդանիները պահելով ու նրանց խնամելով, երեխաններն ավելի լավն են դառնում» (52): Պարզ երևում է, որ այս նախադասության երկու մասերի միջև չկա իմաստային կապ և տրամաբանական հետևողականություն:

Ահա այս թարգմանության համապատասխան նախադասությունը բնագրում. «Раньше он был учителем биологии и считал, что имея животных, ухаживая за ними, дети становятся лучше».

Ի դեպ, կարծում ենք, որ տեղին չէ նաև «գտնել» բայի նման կիրառու-

թյունը բերված նախադասության մեջ, ինչպես «կիսավի»-ը հետևյալ օրինակում՝ «... նրա մեջ խիստ ցանկություն առաջացավ այդ մասին կիսվել կամենեի հետ» (65):

Հանդիպում են նաև անավարտ, թերի նախադասություններ, քերականական այլ կարգի վրիպումներ: Նշենք այդ կարգի մի քանի օրինակներ.

«Եթե նա որոշել էր ձրի տալ, ուրեմն իրեն ավելի հաճելի էր: Այնպես որ իզուր եմ» (72):

«Պոլիվանովին հուշեց ծխախոտով տիկինը (73): (Այստեղ հիշենք «Շրեկով տիկինը»: արտահայտությունը): «Տուշկովայի մասին նա ասաց, որ սույնը մարդու շահագործումն է» (55):

«Հասկացեք, ինչը մենք կարողացանք նրանց տալ դպրոցում, այդ էլ կմնա նրանց մինչև նրանց կյանքի վերջը»:

«Զանդահարել են Պոլիվանովի մոտից, խնդրել են Լոսևին անցնել»:

Յուրաքանչյուր գեղարվեստական ստեղծագործություն, այդ թվում նաև թարգմանական, բացի գեղագիտական, դաստիարակչական գործառությունից, ունի նաև ուսուցողական նշանակություն, առավել ևս՝ մայրենի լեզվի ուսուցման: Այս առումով էլ թարգմանվող երկի նպատակը ամենից առաջ պետք է լինի լեզվի մաքրության ու պարզության, գեղեցկության և արտահայտչականության, քերականական ձևերի ճիշտ և տեղին ընտրության ու գործածության կարևորագույն խնդիրը:

Հասկացե՛ք վերջին տարիներին մեր լեզուն ստեղծում է իր սեփական, ինքնուրույն բառերն ու արտահայտությունները և կամաց-կամաց հրաժարվում դրանց համապատասխան փոխառյալ ձևերից: Չնայած դրան, չգիտես ինչու, թարգմանության մեջ հաճախ գործածվում են այնպիսի բառեր ու արտահայտությունների ոչ հայերեն ձևեր, որոնք վաղուց արդեն մեր լեզվում դործածական չեն, ինչպես ասենք՝ տրագիցիա, ինտելիգենտ, կուրորտ, անտրեսոլ, կալկա, լոջիաներ, տրակտ, բարաք, կաբինետ, շտոֆ, կոտեջներ և շատ ու շատ նման բառեր:

Այս օտար բառերի մի մասը երբեմն հասկանալի չէ ամեն մի ընթերցողի, և հետևաբար նման դեպքերում կարելի էր նկարագրորեն նշել դրանց իմաստը կամ տողատակին բացատրել ծանոթագրության կարգով:

Այսպես օրինակ՝

«— Ինքներդ էլ տեսնում եք,— ասաց նա, որ այստեղից ամենահարմար ուակուրսն է» (41):

Պարզ է, որ «ուակուրսը» գեղանկարչական (նաև լուսանկարչական) տերմին է, և այն կարող է հասկանալի չլինել յուրաքանչյուր ընթերցողի, ուստի և ինչ-որ կերպ կարելի էր տալ այդ բառի հայերեն բացատրությունը: Ի դեպ, նշենք, որ այս բառը չի հիշատակվում վերջին շրջանի հայերեն բացատրական բառարաններում: Ար. Ղարիբյան «Ռուս-հայերեն բառարանում» այն բացատրվում է իբրև «առարկայի հեռանկարային դիրք» կամ հանգրեճ, վերջին ձևը, անշուշտ, հին է, այլ իմաստ ունի և գործածական չէ:

«Նկարի» թարգմանության մեջ հաճախ գործածվում են նաև բարբառային բառեր (ինչպես՝ հալա, զարնեց, քաքուլ և այլն), որոնք տվյալ կիրառություններում ոճական ոչ մի երանգավորում չունեն:

Մեր այս դիտողությունների և ցանկությունների նպատակը հիմնականում այն է, որ հնարավորին չափ բացահայտվեն ու նշվեն թարգմանություն-

ների մեջ նկատվող լեզվական անճշտություններն ու շեղումները, որպեսզի թարգմանական գրականությունը ևս կարողանանք նպաստել մեր մայրենի լեզվի զարգացմանն ու հարստացմանը, սիրով ու զգուշությամբ վարվել նրա նկատմամբ, անաղարտ պահել այն, որ թանկ է մեզանից յուրաքանչյուրի համար:

Л. К. ЕЗЕКЯН — Несколько переводческих ошибок. — Автор статьи обнаруживает языковые изъяны в армянском переводе романа Д. Гранина «Картина», слова, выражения, фразы, грамматические формы, чуждые языковому мышлению армян и являющиеся результатом буквального калькирования оригинала.